**Հավելված 5**

**«ԷԱՃԱՊՁԲ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 »* ծածկագրով**

**Էլեկտրոնային աճուրդի հրավերի**

**__ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-3**

ք. Երևան ____/____________/2026թ.

« «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ »-ը ի դեմս Արմեն Բեգոյան ի, որը գործում է « «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « Արմիմպորտս ՍՊԸ »-ը, ի դեմս տնօրեն Տիգրան Թումաղյան ի, որը գործում է « Արմիմպորտս ՍՊԸ »-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և սույն ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Սույն կետում նշված արձանագրությունը կազմում է պայմանագրի անբաժանելի մասը: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

2. **ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

Ստորագրող
ԱՐՄԵՆ ԲԵԳՈՅԱՆ
3105700331

2026-03-23 17:22:24 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի` պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք`

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն` իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա`

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ`

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

* *լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից մինչև հրավերը հրապարակելը:*

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք` պայմանագրով նախատեսվածի փոխարեն` պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե`

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է`**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում` նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո` ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ` ելնելով

ապրանքի բնույթից և նշանակությունից։

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները։

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները։

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր։

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 354552.00 AMD(երեք հարյուր հիսունչորս հազար հինգ հարյուր հիսուներկուդրամ ) ՀՀ դրամ , ներառյալ ԱԱՀ-ն:629[1]

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

730[2]

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի

25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. **ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

8 31[3]

5. **ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման

արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ։

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. **ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար։

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով։

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի *0,5* (*զրո ամբողջ հինգ տասնորդական*) տոկոսի չափով:[9] [3][4] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ։

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի *0,05* (*զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական*) տոկոսի չափով։

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով։

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց։

## 7. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։

## 8. **ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը։

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը* [5]։

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ

պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11[6]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը` Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե

մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են։

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա։ Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը։

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11.1 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ

ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, Ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը, իսկ գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում՝ բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ապրանքի մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից _____ աշխատանքային օրվա

ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

13[8]

10. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ԳՆՈՐԴ**

**«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ**

**ՀՀ, ք. Երևան Փավստոս Բուզանդի փող., 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք**

**Ամերիաբանկ ՓԲԸ**

**1570088982620100**

**02819226**

**--------------------------------**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**Արմիմպորտս ՍՊԸ**

**Սևան փողոց 28/1, Երևան, Հայաստան**

**Յունիբանկ ԲԲԸ**

**24144003779400**

**00154508**

---------------------------------

Ստորագրող

ՏԻԳՐԱՆ ԹՈՒՄԱՂՅԱՆ

2112780417

2026-03-20 17:00:26 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

[1]29 6 *Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2]30 7 *Վաճառողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Գնորդի և Վաճառողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[3]31 8 *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնվելիք ապրանքը չի հանդիսանում հիմնական միջոց:Իսկ եթե գնվելիք ապրանքը հանդիսանում է հիմնական*

*միջոց, ապա երաշխքային ժամկետը չպետք է պակաս լինի 365 օրացուցային օրից*

[4]*9 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[5]10 *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[6]11 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

[7]12 *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

[8]13 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումներ» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
____/____________/2026թ. կնքված
ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշ, ֆիրմայի անվանում* | տեխնիկական բնութագիրը |
| 3 | 31684400/502 | Գլխանիստային վարդակ 8մմ | Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ | Գլխանիստային վարդակ, միացման ձևը քառակուսի՝ զսպանակով գնդիկով, միացման չափը 3/8 դույմ, չափերի համակարգը՝ մետրական, գլխիկի չափսը 8մմ, գլխիկի երկարությունը առնվազն 63մմ, աշխատանքային մասի խորությունը 12մմ, ծայրակալի ձևը ներքին տասներկուսանիստ, քաշը առնվազն 0.05կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | 31684400/503 | Գլխանիստային վարդակ 10մմ | Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ | Գլխանիստային վարդակ, միացման ձևը քառակուսի՝ զսպանակով գնդիկով, միացման չափը 3/8 դույմ, չափերի համակարգը՝ մետրական, գլխիկի չափսը 10մմ, գլխիկի երկարությունը առնվազն 63մմ, աշխատանքային մասի խորությունը 12մմ, ծայրակալի ձևը ներքին տասներկուսանիստ, քաշը առնվազն 0.05կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 5 | 31684400/504 | Գլխանիստային վարդակ 12մմ | Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ | Գլխանիստային վարդակ, միացման ձևը քառակուսի՝ զսպանակով գնդիկով, միացման չափը 3/8 դույմ, չափերի համակարգը՝ մետրական, գլխիկի չափսը 12մմ, գլխիկի երկարությունը առնվազն 70մմ, աշխատանքային մասի խորությունը 12մմ, ծայրակալի ձևը ներքին վեցանիստ, քաշը առնվազն 0.05կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 6 | 31684400/505 | Գլխանիստային վարդակ 13մմ | Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ | Գլխանիստային վարդակ, միացման ձևը քառակուսի՝ զսպանակով գնդիկով, միացման չափը 3/8 դույմ, չափերի համակարգը՝ մետրական, գլխիկի չափսը 13մմ, գլխիկի երկարությունը առնվազն 70մմ, աշխատանքային մասի խորությունը 15մմ, ծայրակալի ձևը ներքին տասներկուսանիստ, քաշը առնվազն 0.06կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 7 | 31684400/506 | Գլխանիստային վարդակ | Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, Վենձո Շինշուան Էլեքթրիք ՍՊԸ, | Գլխանիստային վարդակ, միացման ձևը քառակուսի՝ զսպանակով գնդիկով, միացման չափը 3/8 դույմ, չափերի համակարգը՝ մետրական, գլխիկի չափսը 14մմ, գլխիկի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 14մմ | Վենձո Շինշուան էլեքթրիք ՍՊԸ | երկարությունը առնվազն 70մմ, աշխատանքային մասի խորությունը 15մմ, ծայրակալի ձևը ներքին վեցանիստ, քաշը առնվազն 0.06կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 17 | 44511220/515 | Խողովակի բանալի (трубной) N1 | Իուէքսչի թրեյդինգ ՍՊԸ, Իուէքսչի թրեյդինգ ՍՊԸ, Իուէքսչի թրեյդինգ ՍՊԸ, Իուէքսչի թրեյդինգ ՍՊԸ | Խողովակների լծակավոր բանալի N1, թույլ է տալիս աշխատել սահմանափակ տարածքներում: Այն կարող է կարգավորվել ամրակի ճիշտ չափի՝ օգտագործելով կարգավորվող մանեկ: Գործիքն ունի ինքնաամրացվող բռնակ՝ շնորհիվ սեղմող ծնոտների ատամների ձևի: Երկարություն՝ 300 մմ, ծնոտի անկյուն՝ 45 աստիճան, բռնելու լայնություն՝ առնվազն 13 մմ, ծնոտի բացվածք՝ 0-25 մմ: Նյութ՝ CrV, Արտադրանքի դաս՝ պրոֆեսիոնալ Քաշ՝ 0.870-0.880 կգ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 24 | 44511700/501 | Հարթաշուրթ | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն | Հարաթաշուրթ N8 առնվազն 220մմ, բռնակները՝ ռետինապատ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 26 | 44511100/502 | Չափման և հսկողության սարք /штангенциркуль/ | Դիջիթլ քելիփր, Դիջիթլ քելիփր, Դիջիթլ քելիփր, Դիջիթլ քելիփր | Շտանգել թվային, նախատեսված ներքին և արտաքին գծային չափերը չափելու համար, ինչպես նաև ունի խորության չափիչ: Չափման միջակայք՝ մինչև 150 մմ, ճշգրտության դաս՝ 1 Սնուցման աղբյուր -մարտկոցներ՝ LR44 (LR1154; V13GA; AG13; G13; RW82) Ներքին չափումների համար ծնոտի երկարացում՝ 17 մմ Արտաքին չափումների համար ծնոտի երկարացում՝ 40 մմ Ձողի նյութ՝ պողպատ Ծնոտի նյութ՝ պողպատ Քայլի հեռավորություն՝ 0.01 մմ Քաշ՝ 0.25-0.35 կգ Փաթեթավորված է պատյանի մեջ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 27 | 44511100/503 | Չափման և հսկողության սարք 3մ | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն | Չափման սարք, (ruletka) չափման տիրույթի միջակայք 0- 3մ ժապավենի լայնությունը առնվազն 19մմ Ժապավենի նյութ՝ նեյլոնե ծածկույթով պողպատ, պատյան՝ ABS պլաստիկ; TPR՝ ջերմապլաստիկ ռետին, ավտոմատ քաշման մեխանիզմով, երկկողմանի նշագծերով : Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 28 | 44511100/504 | Չափման և հսկողության սարք 5մ | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն | Չափման սարք, (ruletka) չափման տիրույթի միջակայք 0- 5մ ժապավենի լայնությունը առնվազն 25մմ Ժապավենի նյութ՝ նեյլոնե ծածկույթով պողպատ, պատյան՝ ABS պլաստիկ; TPR՝ ջերմապլաստիկ ռետին, ավտոմատ քաշման մեխանիզմով, երկկողմանի նշագծերով : Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 29 | 44511100/505 | Չափման և հսկողության սարք 10մ | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն | Չափման սարք, (ruletka) չափման տիրույթի միջակայք 0- 10մ ժապավենի լայնությունը առնվազն 25մմ Ժապավենի նյութ՝ նեյլոնե ծածկույթով պողպատ, պատյան՝ ABS պլաստիկ; TPR՝ ջերմապլաստիկ ռետին, ավտոմատ քաշման մեխանիզմով, երկկողմանի նշագծերով : Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 30 | 44511100/506 | Չափման և հսկողության սարք | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, | Ժապավենի նյութը՝ մետաղ, չափման սանդղակը՝ միլիմետրային, երկարությունը 100մ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 100մ | Հաշիդուն | |
| 31 | 44511220/521 | Պտուտակ կտրող աքցան | Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն, Հաշիդուն | Պտուտակակտրիչ, երկարությունը 350մմ, պատրաստման նյութը քրոմ վանադիում, բռնակները ռետինապատ, քաշը առնվազն 1.0կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 33 | 44511371/507 | TORX բանալիների ծալովի հավաքածու | Քենդու, Քենդու, Քենդու, Քենդու | TORX բանալիների ծալովի հավաքածու, Երկարություն- 190 մմ, Լայնություն- 44 մմ, Բարձրություն- 60 մմ, Նվազագույն չափը՝ T9 Առավելագույն չափը՝ T40 Քանակը հավաքածույում՝ առնվազն 8 հատ: Ծածկույթը՝ քրոմապատ Տեսակը՝ TORX Նյութը՝ Cr-V T9-10-15-20-25-27-30-40 ստեղներ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 34 | 44511371/508 | Վեցանկյուն բանալիների ծալովի հավաքածու | Քենդու, Քենդու, Քենդու, Քենդու | Վեցանկյուն բանալիների ծալովի հավաքածու Երկարությունը 190 մմ Լայնություն- 44 մմ Բարձրություն- 60 մմ Նվազագույն չափսը՝ 2 մմ Առավելագույն չափը՝ 8 մմ Քանակը հավաքածուի մեջ՝ առնվազն 8 հատ: Ծածկույթը՝ քրոմապատ Նյութը՝ Cr-V Չափերը՝ 2-8 մմ կոմպլեկտում: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 37 | 44511190/501 | Կացին 0.6կգ | Դեկոր, Դեկոր, Դեկոր, Դեկոր | Կացին ատաղձագործի, երկարությունը առնվազն 360մմ, կացնի նյութը պողպատ 45՝ կռածո, սայրի նյութը գործիքային ածխածնային պողպատ У8ГА, կարծրությունը 50HRc, բռնակը փայտե՝ հղկված, մետաղական մասի զանգվածը առնվազն 0,6կգ: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և առանց խոտանի: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը իր միջոցներով և իր հաշվին: |
| 39 | 44511220/ | Կշեռք / | Դեկոր, | Հատակի էլեկտրական կշեռք ծողով, հարթակի չափս 30x40 սմ, |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 523 | մինչև 100կգ/ | Դեկոր, Դեկոր, Դեկոր | առավելագույն քաշ 100 կգ, լեդ էկրանով, լիցքավորվող 220-240 վոլտ, պատրասված է հաստ ծալքավոր թիթեղից |
| 40 | 44511220/ 524 | Կշեռք / մինչև 300կգ/ | Դեկոր, Դեկոր, Դեկոր, Դեկոր | Հատակի էլեկտրական կշեռք ծողով, հարթակի չափս 40x50 սմ, առավելագույն քաշ 300 կգ, լեդ էկրանով, լիցքավորվող 220-240 վոլտ, պատրասված է հաստ ծալքավոր թիթեղից |

* Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

**ԳՆՈՐԴ**

**«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ**

**Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Փավստոս Բուզանդի փող., 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք**

**Ամերիաբանկ ՓԲԸ**

**1570088982620100**

**02819226**

**Արմեն Բեգոյան**

**___________**

**/ստորագրություն/**

**Կ.Տ**

**ՎԱՃԱՌՈՂ**

**Արմիմպորտս ՍՊԸ**

**Հասցե՝ Սևան փողոց 28/1, Երևան, Հայաստան**

**Յունիբանկ ԲԲԸ**

**24144003779400**

**00154508**

**Տիգրան Թումաղյան**

**___________**

**/ստորագրություն/**

Ստորագրող

ՏԻԳՐԱՆ ԹՈՒՄԱՂՅԱՆ

2112780417

2026-03-20 17:01:30 GMT+04:00

Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 2
____/___________/2026թ. կնքված
ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

# ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 3 | հատ | 1800.00 | 21600.00 | 12 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 12 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 4 | հատ | 1800.00 | 21600.00 | 12 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 12 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 5 | հատ | 1800.00 | 21600.00 | 12 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 12 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 6 | հատ | 1800.00 | 21600.00 | 12 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 12 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 7 | հատ | 1800.00 | 21600.00 | 12 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 12 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 17 | հատ | 1440.00 | 28800.00 | 20 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 20 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 24 | հատ | 920.00 | 27600.00 | 30 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 30 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 26 | հատ | 4560.00 | 22800.00 | 5 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 5 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 27 | հատ | 466.66 | 8400.00 | 18 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 18 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 28 | հատ | 680.00 | 20400.00 | 30 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 30 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 29 | հատ | 1200.00 | 21600.00 | 18 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 18 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 30 | հատ | 7200.00 | 14400.00 | 2 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 2 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 31 | հատ | 3120.00 | 9360.00 | 3 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 3 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 33 | լրակազմ | 1536.00 | 15360.00 | 10 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 10 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 34 | լրակազմ | 1440.00 | 7200.00 | 5 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 5 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 37 | հատ | 1760.00 | 26400.00 | 15 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 15 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 39 | հատ | 9756.00 | 19512.00 | 2 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 2 | ֆինանսական միջոցներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |
| 40 | հատ | 12360.00 | 24720.00 | 2 | ՀՀ, ք. Երևան, Շիրազի 4 | 2 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օրվա ընթացքում: |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում` առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| **«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ** | **Արմիմպորտս ՍՊԸ** |
| **Հասցե` ՀՀ, ք. Երևան Փավստոս Բուզանդի փող., 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք** | **Հասցե` Սևան փողոց 28/1, Երևան, Հայաստան** |
| **Ամերիաբանկ ՓԲԸ** | **Յունիբանկ ԲԲԸ** |
| **1570088982620100** | **24144003779400** |
| **02819226** | **00154508** |
| **Արմեն Բեգոյան** | **Տիգրան Թումաղյան** |
| | ___________ |

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԹՈՒՄԱՂՅԱՆ
2112780417
2026-03-20 17:03:35 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

___________
/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
____/____________/2026թ. կնքված
ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 3 | 31684400/502 | Գլխանիստային վարդակ 8մմ | | | | | | | | | | | | | 21600.00 |
| 4 | 31684400/503 | Գլխանիստային վարդակ 10մմ | | | | | | | | | | | | | 21600.00 |
| 5 | 31684400/504 | Գլխանիստային վարդակ 12մմ | | | | | | | | | | | | | 21600.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | 31684400/505 | Գլխանիստային վարդակ 13մմ | | | | | | | | | | | | | 21600.00 |
| 7 | 31684400/506 | Գլխանիստային վարդակ 14մմ | | | | | | | | | | | | | 21600.00 |
| 17 | 44511220/515 | Խողովակի բանալի (трубной) N1 | | | | | | | | | | | | | 28800.00 |
| 24 | 44511700/501 | Հարթաշուրթ | | | | | | | | | | | | | 27600.00 |
| 26 | 44511100/502 | Չափման և հսկողության սարք /штангенциркуль/ | | | | | | | | | | | | | 22800.00 |
| 27 | 44511100/503 | Չափման և հսկողության սարք 3մ | | | | | | | | | | | | | 8400.00 |
| 28 | 44511100/504 | Չափման և հսկողության սարք 5մ | | | | | | | | | | | | | 20400.00 |
| 29 | 44511100/505 | Չափման և հսկողության սարք 10մ | | | | | | | | | | | | | 21600.00 |
| 30 | 44511100/506 | Չափման և հսկողության սարք 100մ | | | | | | | | | | | | | 14400.00 |
| 31 | 44511220/521 | Պտուտակ կտրող | | | | | | | | | | | | | 9360.00 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | աքցան | | | | | | | | | | | | | |
| 33 | 44511371/507 | TORX բանալիների ծալովի հավաքածու | | | | | | | | | | | | | 15360.00 |
| 34 | 44511371/508 | Վեցանկյուն բանալիների ծալովի հավաքածու | | | | | | | | | | | | | 7200.00 |
| 37 | 44511190/501 | Կացին 0.6կգ | | | | | | | | | | | | | 26400.00 |
| 39 | 44511220/523 | Կշեռք / մինչև 100կգ/ | | | | | | | | | | | | | 19512.00 |
| 40 | 44511220/524 | Կշեռք / մինչև 300կգ/ | | | | | | | | | | | | | 24720.00 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ԳՆՈՐԴ**

**«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ**

**Հասցե՝ ՀՀ, ք. Երևան Փավստոս Բուզանդի փող., 1/3 շենք, Երևանի քաղաքապետարանի 2-րդ մասնաշենք**

**Ամերիաբանկ ՓԲԸ**

**1570088982620100**

**02819226**

**Արմեն Բեգոյան**

___________

**ՎԱՃԱՌՈՂ**

**Արմիմպորտս ՍՊԸ**

**Հասցե՝ Սևան փողոց 28/1, Երևան, Հայաստան**

**Յունիբանկ ԲԲԸ**

**24144003779400**

**00154508**

**Տիգրան Թումաղյան**

Ստորագրող

ՏԻԳՐԱՆ ԹՈՒՄԱՂՅԱՆ

2112780417

2026-03-20 17:04:53 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

/ստորագրություն/

Կ.Տ

Կ.Տ

Հավելված N 4
____/___________/2026թ. կնքված
ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | | Պատվիրատու | |
|---|---|---|---|
| ______________________ | | ______________________ | |
| ______________________ | | ______________________ | |
| գտնվելու վայրը | ____________ | գտնվելու վայրը | ____________ |
| հհ | ____________ | հհ | ____________ |
| հվհհ | ____________ | հվհհ | ____________ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«___» «____» 20___ թ.
Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_________________» 20__թ.
Պայմանագրի համարը՝ ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-3

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_______________» 20___թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 3 | Գլխանիստային վարդակ 8մմ | | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | Գլխանիստային վարդակ 10մմ | | | | | | |
| 5 | Գլխանիստային վարդակ 12մմ | | | | | | |
| 6 | Գլխանիստային վարդակ 13մմ | | | | | | |
| 7 | Գլխանիստային վարդակ 14մմ | | | | | | |
| 17 | Խողովակի բանալի (трубной) N1 | | | | | | |
| 24 | Հարթաշուրթ | | | | | | |
| 26 | Չափման և հսկողության սարք /штангенциркуль/ | | | | | | |
| 27 | Չափման և հսկողության սարք 3մ | | | | | | |
| 28 | Չափման և հսկողության սարք 5մ | | | | | | |
| 29 | Չափման և հսկողության սարք 10մ | | | | | | |
| 30 | Չափման և հսկողության սարք 100մ | | | | | | |
| 31 | Պտուտակ կտրող աքցան | | | | | | |
| 33 | TORX բանալիների ծալովի հավաքածու | | | | | | |
| 34 | Վեցանկյուն բանալիների ծալովի հավաքածու | | | | | | |
| 37 | Կացին 0.6կգ | | | | | | |
| | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 39 | Կշեռք / մինչև 100կգ/ | | | | | | | |
| 40 | Կշեռք / մինչև 300կգ/ | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| **Ապրանքը հանձնեց** | **Ապրանքը ընդունեց** |
|---|---|
| __________________________ | __________________________ |
| **ստորագրություն** | **ստորագրություն** |
| __________________________ | __________________________ |
| **ազգանուն, անուն** | **ազգանուն, անուն** |
| **Կ.Տ.** | **Կ.Տ.** |

Հավելված N 4.1
____/___________/2026թ. կնքված
ԿԾՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N______

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ -ի (այսուհետ՝ Գնորդ) և Արմիմպորտս ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող)

միջև 20 թ.______________________________ -ին կնքված N ԿԾՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17-3 պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. __________________________-ին հանձնման-ընդունման նպատակով

Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| Անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Գլխանիստային վարդակ 8մմ | հատ | |
| Գլխանիստային վարդակ 10մմ | հատ | |
| Գլխանիստային վարդակ 12մմ | հատ | |
| Գլխանիստային վարդակ 13մմ | հատ | |
| Գլխանիստային վարդակ 14մմ | հատ | |
| Խողովակի բանալի (трубной) N1 | հատ | |
| Հարթաշուրթ | հատ | |
| Չափման և հսկողության սարք /штангенциркуль/ | հատ | |
| Չափման և հսկողության սարք 3մ | հատ | |
| Չափման և հսկողության սարք 5մ | հատ | |
| Չափման և հսկողության սարք 10մ | հատ | |
| Չափման և հսկողության սարք 100մ | հատ | |
| Պտուտակ կտրող աքցան | հատ | |
| TORX բանալիների ծալովի | լրակազմ | |

| | | |
|---|---|---|
| հավաքածու | | |
| Վեցանկյուն բանալիների ծալովի հավաքածու | լրակազմ | |
| Կացին 0.6կգ | հատ | |
| Կշեռք / մինչև 100կգ/ | հատ | |
| Կշեռք / մինչև 300կգ/ | հատ | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

______________________________________

**ազգանուն, անուն**

___________________________________

**Ստորագրություն**

**Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________________

**ազգանուն, անուն**

____________________________________

**Ստորագրություն**

Հավելված N 5
____/____________/2026թ. կնքված
ԿՇՄՊ-ԷԱՃԱՊՁԲ-26/17 ծածկագրով պայմանագրի

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

_____________________________________________________________________հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. (պատվիրատուի (գնորդի) անվանումը)-ի և (կատարողի (վաճառողի) անվանումը) միջև «--» 20 թ. կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և (կատարողի (վաճառողի) անվանումը)-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.11.1 (ապրանքի գնման դեպքում 8.11.1) կետով սահմանված պահանջներին:

____________________________________ ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.